

չակոմի, կոմս խոնարհելիքի և շատ ուրիշ բարձրատիճանի անձինքների հետ տեսակցելուց յետոյ, խորէն արքեպիսկոպոսը բազմ ունեցաներկայանալ թագաւոր Կայսրին, և առաջադրել Նորին Մեծութեան որդեման ուշադրութեանը պատուր յիշատակագիր, որ բովանդակում էր իր մէջ Հայաստանի մէջ անելու վերանորոգութիւնները (բէֆօրմ) կարծւորէկար, Հետեւեալ կերակրի օրը, արքեպիսկոպոսը մի կարծառօտ քարոզի մէջ յայտնեց լազաւթիւ հայոց հասարակութեանը, որ հաւաքվեցաւ հայոց եկեղեցու մէջ, թագաւոր Կայսրի բարեհաճութիւնը ղէպի թիւրքիայի բազմապարսպ հայերը և այդ յայտնութիւնը պատճառեց հասարակութեան մէջ ընդհանուր ուրախութեան և երախտագիտութեան զգացմունք: Պատարագից յետոյ կատարվեցան հանդիսատու մաղթանքներ, ծնրադրութեամբ, հայոց ազգի և եկեղեցու Օրդոսափառ Հովանաւորի և ամբողջ կայսերական տան երկարակեցութեան համար:

Անգ պատմում են մի անցք, որ ապացոյց է թէ թիֆլիսի պոլիցիան շատ լաւ է հսկում մեր փողոցների անկարգութիւնների վրա: Այս օրերս, ինչպէս մեզ հաղորդում են, պատահեց թիֆլիսի գերմանական Նոյնիայում հետեւեալ անցքը: Գիշերվա ժամը 12-ին, մի գերմանացի օրիորդին ֆայետօնով փայտեցին: Փայտեցողը, ասում են պաշտօնական տեղում ծառայող մի գրագիր է: Ողորմելի օրիորդին աղատեցին մի քանի երիտասարդներ, որոնք գտան օրիորդին ասնելու և ձեռները կապած, Հրաւիրում ենք մեր պոլիցիային ուշադրութիւն դարձնել այդ տեսակ անկարգութիւնների վրա:

Մեր վերջին համարում մենք հաղորդեցինք մեր ընթերցողներին որ գերման Պէյման սատարիկ հիւանդ է տիֆլիս: Մեր համարը հրատարակվելուց միւս օրը լուր ստացվեցաւ թէ կովկասեան զօրքի այդ քաղ գերմանացի արդէն վախճանվել է:

ԱՆԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՏՑ մեր թղթակիցը գրում է մեզ որ պատերազմի վերջանալուց յետոյ Ալեքսանդրապոլի մէջ առուստրոս շատ ընկել է և համարեա զազարել է: Այն խառնութիւն կամ կըրպակը, որ պատերազմի ժամանակ օրական մօտ երեք հարիւր թուրք գումարի ապրանք էր ծախում, այժմ հազիւ տաս կամ տասն և հինգ թուրք գումարի է ծախում օրական:

Մեզ հաղորդում են ԱՆԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՏՑ հետեւեալը: «Ալեքսանդրապոլի հայոց հողերը զարգացնելու անկողինը անկողինը անկողինը և ուսումնարանի շինութիւնը հիւանդանոցի է դարձած: Այժմ զարգացնելու անկողինը կորեցին նոցա ուսմանը և ուսուցիչներից մասնը հեռացան քաղաքից, ուրիշ քաղաքներում իրանց համար գործ կամ պաշտօն գտնելու համար, իսկ ոմանք թէ և գտնվում են դեռ քաղաքի մէջ, որոնք մենք իրանց համար պարտավորեցին»:

ՆԵՐՆԱՆԻՑ մեր նամակագիրը հաղորդում է, որ ապրիլի 20—22 այնտեղ սպասում են պարսկացի Շահին, որի ընդունելութեան համար հայրկաւոր պատասխանութիւններ են տեսնված: Նամակագիրը խոստանում է Շահին ընդունելութեան մանրամասները հաղորդել:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑՑ մեզ գրում են հետեւեալը: Հիմարանի 5-օրը դատաստան աշակերտները 15 հոգի թողեցին ձեռնարանը և գնացին իրանց հայրենիքը: Եւ շատ խոսեցին այդ աշակերտներից մէկի հետ: Նա գնալուց մի քանի օր հետո մեզ գրեց իր քաղաքի մէջին էլ այն է եղել, որ նա իր բարեկամ աշակերտի միջոցով անդադար տեղեկացել է միւս աշակերտների զազանքները և յայտնել է Մանկունուն: Մանկունուն ձեռնարանում գործել է ինչպէս կամեցել է: Ասում են, որ մասնաժողովը առաջարկել է օրը: Այլապէս սկսուն կամ թիֆլիսի թեմի առաջնորդ լինել, կամ ձեռնարանի տեսուչ:

ԲԱՅԻՆԴՈՒՐ գիւղից մեզ հաղորդում են, որ շրջակայքում տարափոխիկ հիւանդութիւնները օրից օր սաստկանում են: Անդադար անձրեւ և ձիւն է գալիս: Գիւղացիները շատ էման գնով ծախում են իրանց տաւարները, որովհետեւ խոտը և դարմանը շատ թանկ են:

ՆԵՐՆԱՆԻՑ մեր նամակագիրը գրում է հետեւեալը: Այս օրերուս պատահեցի մի հայ գաղթականի, որ իր երեխայի անունը դրել էր Տէր-Ղուկասով: Երբ ևս հարցրի զրա պատճառը, պատմեց, որ նրա կինը ծննդեան ցաւերը զգաց հէնց այն ժամանակ, երբ հայերը ռուսաց զօրքերի հետ զաղթում էին: Նա իր կնոջ հետ ստիպված էր հետ մնալ և գնալ: Տէր-Ղուկասով երբ իմացաւ պատճառը հրամայեց զօրքերին սպասել մինչև կինը ծնի: Մի քանի օրակցից յետոյ զաղթականը արու զաւակ ունեցաւ և ի պատիւ գնեկալի անունը դրեց Տէր-Ղուկասով:

«ДОНСКАЯ ПЧЕЛА» լրագրի 28-օրը համարում տպված է մի առաջնորդող յօդուած Հայոց խնդրի վրա: Զօդուածը առաջարկում է որպէս լուծումն արեւելեան խնդրի արիական թիւրքիայի վերաբերութեամբ, որ Ռուսաստանը ոչինչ զիջումն չանելով Անգլիային, և յետ չը տալով իր նոր նուաճած Հայաստանի մի մասը թիւրքիային, պահանջի թիւրքաց Հայաստանի համար ինքնավարութիւն, միացնելով նրա հետ իր նոր նուաճած Հայաստանի մասը:

ԱՌՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԱԼԻՍԹԻՒՐԻ ԾՐԱՔԵՐԱԿԱՆՐ

Անգլիայի արտաքին գործերի նորընտիր պաշտօնեայ մարկիզ Սալեսբուրի հետեւեալ շրջաբերականն է ուղարկել ապրիլի 1-ին (մարտի 20), անգլիական բոլոր դեսպաններին: Անգլիայի գանդաւանները Ռուսաստանի դէմ պարզված են այդ շրջաբերականի մէջ, հետեւեալ Անգլիայի քաղաքականութիւնը և պահանջները աւելի որոշ են այժմ քան թէ լուրջ Դերբիի պաշտօնավարութեան ժամանակ: Անգլիական և ռուսական կաբինէտների մէջ վերջին բանակցութիւնները այդ շրջաբերականի վրա լինելով, մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին նրա բովանդակութեան հետ որ ներկայացնում է արեւելեան հարցի դժուարացումը և վէճի պատճառ եղող կողմերը:

Նորին Վեհափառութեան թագուհու հրամանի համեմատ, խնդրում ենք Ձեր վսեմութեանց, գրում է Սալեսբուրի անգլիական դեսպաններին, թէ այն կառավարութեան որի մօտ դեսպան գտնվում էք, բացատրեք Անգլիայի վարմունքը թիւրքիայի և Ռուսաստանի մէջ կապված խաղաղական հիմունքների և այդ զաշագիրը քննելու համար առաջարկված եւրօպական կոնգրէսի մասին:

Յունվարի 14 (2)-ին, անգլիական կառավարութիւնը յայտնեց Վորչաօվ իշխանին թէ Ռուսաստանի և թիւրքիայի մէջ կապված որ և իցէ զաշագիր, որովհետեւ փոփոխում է 1856-ի և 1871-ի դաշնագրութիւնները, անվտեր կը լինի առանց հաւանութեան այն տէրութիւններին, որոնք ստորագրած են յիշեալ դաշնագրութիւններին:

Յունվարի 25 (13)-ին ռուսաց կառավարութիւնը պատասխանեց ապահովացնելով թէ զիտաւորութիւն չունի առանձին կարգադրել եւրօպական հարցերը որոնք խաղաղութեան հետ կապ ունեն: Յունվարի 29-ին անգլիական կառավարութիւնը յայտնեց ռուսաց կառավարութեան թէ ինքը վտերական չէ համարի Կազանի կառավարութեան և թիւրքիայի հաւատարմաւորների մէջ եղած կորդագրութիւնները, ի թէ Փարիզի դաշնագրին ստորագրող տէրութիւնների գործակցութեամբ չը հաստատվին, քանի որ փոփոխում են եւրօպական դաշնագրութիւնները և պատկանում են ընդհանուր և բրիտանական շահերին:

Յունվարի 30-ին իշխան Վորչաօվ պատասխանեց թէ մի քանի խաղաղական հիմունքների առաջարկելը հարկաւոր էր զինադադար անելու համար, բայց զրանք խաղաղական սկիզբներ են միայն և եւրօպական շահերի վերաբերեալ հարցերը եւրօպական

ակրութիւնների գործակցութեամբ կը կարգադրվեն և այս մասին արդէն որոշ և դրական ապահովութիւններ արված են բրիտանական կառավարութեան:

Փետրվարի 4-ին, աւստրիական դեսպանը մի հեռագիր հաղորդեց որ հրաւիրում էր բրիտանական կառավարութեան ներկայանալ Վիեննայում մի կոնֆերէնցիայի: Նորին Վեհափառութեան թագուհու կառավարութիւնը խնդրեց ընդունեց այդ առաջարկութիւնը:

Փետրվարի 5-ին, աւստրիական դեսպանը մի պաշտօնական հրաւեր ուղղեց լուրջ Դերբիին, յայտնելով թէ՝

«Աւստրո-Ունգարիան մինը լինելով այն տէրութիւններից որոնք արեւելքում քաղաքական գրութիւնը կանոնաւորելու համար կապված միջադպրին դաշնագրութիւններին ստորագրած են, ներկայ պատերազմի առջև միշտ պահած է իր իրաւունքն եղած մասնաւոր ազդեցութիւնը որ ունենալու է ապագայ խաղաղութեան պայմանների որոշ կերպով կ'որոշարկված ժամանակ»:

Ռուսաստանի Կայսերական կառավարութիւնը որին յայտնած ենք մեր այս նկատողութիւնը, բոլորովին իրաւացի համարած է այն:

Այժմ որ խաղաղական հիմունքները ստորագրված են Ռուսաստանի և թիւրքիայի մէջ, մեզ կ'ընկնէ թէ ժամանակը հասած է եւրօպայի համաձայնութիւնը հաստատելու այն փոփոխութիւնների վրա որոնք հարկաւոր կը լինեն յիշեալ դաշնագրութիւնների մէջ: Մենք կարծում ենք թէ այդ համաձայնութիւնը գոյացնելու ամենայնաւոր կերպն այն է որ 1856-ի Փարիզի դաշնագրին և 1871-ի Լոնդոնի ծանուցագրին (պրօտօկոլ) ստորագրող տէրութիւններից մի կոնֆերէնցիա գումարվի:

Նայն ամսի 9-ին աւստրիական կառավարութիւնը առաջարկեց որ փոխանակ Բարէն-Բարէնում կոնֆերէնցիա անելու, մի կոնգրէնցիա Բերլինում: Անգլիական կառավարութիւնը պատասխանեց որ ընդունում է այդ փոփոխութիւնը, բայց լաւ է որ արդէն հասկացված լինի թէ այն բոլոր հարցերը որոնցով զբաղված է թիւրքիայի և Ռուսաստանի մէջ կապված դաշնագրեր, կոնգրէսի վիճաբանութեանը կենտրոնվելու են և դաշնագրութիւններով արդէն հաստատված գրութեան մէջ որ և իցէ փոփոխութիւն վտերական չէ լինի առանց եւրօպական տէրութիւնների հաւանութեան:

Մարտի 12-ին, կոմս Բայադին տեղեկութիւն տրվեցաւ թէ պէտք է որ անգլիական կառավարութիւնը կատարեալ ապահովութիւն ստացած լինի մարտի 9-ի գրութեան մէջ յիշված կէտերի մասին որ կոնգրէսին մասնակցի:

13-ին, անգլիական կառավարութիւնը աւելի կատարեալ բացատրութիւններ տուեց առաջին կէտի վերաբերեալ թէ պէտք է որ կոնգրէսում մտնելուց առաջ կատարեալ վաւաստիութիւն ունենայ որ Ռուսաստանի և թիւրքիայի մէջ կապված դաշնագրի բոլոր յօդուածները կենտրոնվեն կոնգրէսի քննութեանը, որպէս զի կարելի լինի որոշել թէ որ յօդուածները պէտք է ընդունված լինեն այլ տէրութիւններից կամ նրանց հաւանութիւնը ունենան, և որոնք ոչ:

14-ին, ռուսաց դեսպանը հետեւեալ հեռագիրը հաղորդեց իշխան Վորչաօվին:

«Ամեն մեծ տէրութիւնները գիտեն արդէն թէ խաղաղութեան հիմնական դաշնագրերը ամբողջապէս իրանց կը հաղորդվի, հէնց որ երկու կողմից վտերացվելով փոխանակվի որ ի հարկէ չուտով կը լինի: Մի և նոյն ժամանակ դաշնագիրը կը հրատարակվի այստեղ: Ոչինչ չունենք ծածկելու»:

17-ին, լուրջ Լօֆտուս իմաց տուեց որ հետեւեալ յիշատակագիրը ընդունած էր իշխան Վորչաօվից:

«Կրկին վստահացնում եմ բրիտանական կառավարութեան թէ Ռուսաստանի և թիւրքիայի մէջ կապված խաղաղութեան հիմնական դաշնագրի ճիշդ օրինակը կը հաղորդվի մեծ տէրութիւններին, կոնգրէսի վտմարվելուց առաջ, և թէ կոնգրէսում անգամ ամեն մէկ տէրութիւն կատարեալ ազատութիւն կունենայ իր նկատողութիւնների և գործերի մասին»:

18-ին, լուրջ Լօֆտուս հեռագրով յայտնեց Պետերբուրգից թէ իշխան Վորչաօվ ասել է իրան որ բնականապէս չէ կարող լուսութեան ենթարկել կոնգրէսի որ և իցէ անգամին, բայց դաշնագրի այն մասերի վրա միայն վիճաբանութիւն ընդունում է որոնք պատկանում են եւրօպական շահերին»:

19-ին, Վորչաօվ իշխանը յայտնեց անգլիական կառավարութեան թէ Ռուսաստանի և թիւրքիայի մէջ կապված խաղաղական միակ դաշնագրի (որովհետեւ այլ դաշնագրութիւն չը կայ գաղանի) կատարեալ օրինակը կը հաղորդվի թագուհու կառավարութեանը, կոնգրէսի հաւաքվելուց շատ առաջ, թէ թագուհու կառավարութիւնը, ինչպէս և այլ մեծ տէրութիւնները, իրան վերապահած է նկատողութեան (ընդունելու կամ չընդունելու) և գործի կատարեալ ազատութիւնը, թէ այն ազատութիւնը որին Ռուսաստանը չէ հաւանաւորում է իր համար էլ և թէ Ռուսաստանի գործը սահմանափակել և փոքրացնել կը լինէր, եթէ այլ բոլոր տէրութիւնների մէջ առանձին նրա վրա միայն նախնական մի պարտաւորութիւն կամ պայման դրվէր»:

21-ին, լուրջ Դերբին պատասխանեց թէ անգլիական կառավարութիւնը չէ կարող բաժանվել այն դիրքից որ արդէն պարզապէս որոշած էր, թէ պէտք է որ կատարեալապէս ապահովեցնել լինի, կոնգրէսում մտնելուց առաջ, թէ դաշնագրի ամեն մէկ կէտը կը ներկայացվի կոնգրէսին, ի հարկէ ոչ թէ ընդունված լինելու համար, այլ որպէս զի քննելով թէ որ յօդուածները պէտք է ընդունված լինեն այլ տէրութիւններից կամ նրանց հաւանութիւնը ունենան, և որոնք ոչ»:

Անգլիական կառավարութիւնը չէ կարող ընդունել իշխան Վորչաօվի տուած մէկնութիւնը թէ այդ նախնական կարգադրութեամբ Ռուսաստանի կարծիքների և գործերը ազատութիւնը աւելի սահմանափակված կը լինի քան թէ այլ որ և իցէ տէրութեան: Հետեւապէս անգլիական կառավարութիւնը կամենում է գիտեալ թէ դաշնագրի ամբողջապէս հաղորդվել այլ տէրութիւններին հաւասար է համարվում քննվելու և վիճաբանելու համար կոնգրէսին ներկայացվելու»:

26-ին, կոմս Շուվալով գրեց լուրջ Դերբին թէ Կայսերական կարկնէտը պարտաւորութիւն է համարում հաստատ մնալ այն յայտարարութեան վրա որ արած է մարտի 19-ին թագուհու կառավարութեան ուղարկած գրութեան մէջ: Ռուսաստանը ազատ է թողում այլ տէրութիւններին, կոնգրէսում վիճաբանութեան իրանց յարմար տեսած հարցերը ներկայացնելու և ինքն էլ իր համար պահում է այդ հարցերի վրա վիճաբանութիւնը ընդունելու կամ չընդունելու ազատութիւնը: 26 կարելի այժմին որոշել թէ Սան-Ստեֆանոյի դաշնագրի պայմանները մինչև որ աստիճան ենթարկվում են եւրօպական տէրութիւնների հաւանութեանը: Բայց ի թէ այդ դաշնագրի մեծ մասը այնպիսի պայմաններ պարունակէ որոնց ընդունվելը հաւանական լինի, այնու ամենայնիւ, տէրութիւնների մի կոնգրէսում վիճաբանութիւնը ըստ քմաց ընդունելու կամ մերժելու իրաւունքը ամենաճանր առարկութիւնների վրա կը թողու բաց: Դաշնագրի պարտական իրաւունքը բոլոր պայմանները եղծում են 1856-ի դաշնագրութիւնը:

(Կը շարունակվի)

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ